ԱՐՑԱԽՅԱՆ ՕՐԱԳԻՐ

ՆՈՐ ԴՊՐՈՑ

Անցած տարվա վերջերից Ստեփանակերտ քաղաքում ճշտական բնակություն են հաստատել հազարավոր ընտանիքներ։ Այդ իսկ պատճառով խիստ ծանրաբեռնվել են քաղաքի 10 դպրոցների դասարանները։ Ստեփանակերտի քաղաքային սովետի գործկոմը ստեղծված վիճակը որոշակիորեն թեթևացնելու նպատակով քաղաքի նախկին դպրոցական շենքը, որը օգտագործվում էր քաղաքային մի շարք հիմնարկների կողմից, ազատեց և այն տրամադրեց քաղժողկրթբաժնին։ Այդպես բացվեց քաղաքի՝ թվով 11-րդ միջնակարգ դպրոցը։ Այսօր այստեղ սովորում է 1054 աշակերտ։ Սակայն քաղաքի դպրոցներն ընդհանուր առմամբ դեռևս մնում են ծանրաբեռնված, դասարաններում աշակերտների թիվը հասնում է 40—50-ի։

Մարզի ղեկավարությունը հրատապ միջոցներ է ձեռնարկում առաջիկայում կառուցելու նոր դպրոցական և նախադպրոցական շենքեր։

ՀԱՎԵՐԺԱՑՎՈՒՄ Է ՀԵՐՈՍՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ

Լեռնային Ղարաբաղը հայրենիքին տվել է քսան Սովետական Միության հերոս, քառասունից ավելի բարձրաստիճան զորավարներ։ Նրանց հիշատակը հավերժացնելու նպատակով Ստեփանակերտի քաղսովետի գործկոմը որոշում է ընդունել Հայրենական մեծ պատերազմի հուշահամալիրի տարածքում, ճեմուղիների երկայնքով տեղադրել նրանց հարթաքանդակները, իսկ Սովետական Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի հուշարձանը տեղադրել նրա անունը կրող կուլտուրայի և հանգստի քաղաքային զբոսայգում։

Արդեն սկսված են այդ աշխատանքները։

ԱՌԱՋՎԵՑ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երևանի «Լույս» արտադրական միավորման Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանը սկսեց «ՆԱԲ-07—107» մակնիշի կենցաղային ջահերի նոր արտադրատեսակի թողարկումը։ Գործարանը օրերս 14 հազար ռուբլու ջահեր առաքեց արտասահմանի իր պատվիրատուներին՝ Կուբա, Մոնղոլիա, Եմեն։

Ընթացիկ տարվա անցած 2 ամսում ջահագործները թողարկել են 3 միլիոն 756 հազար ռ. ապրանքային արտադրանք, զգալիորեն գերազանցելով նախատեսված պլան-առաջադրանքները։

Գործարանի ինժեներակոնստրուկտորական բյուրոն, համագործակցելով Երևանի կոլեգաների հետ, առաջիկայում ձեռնամուխ կլինի նոր ջահատեսակների թողարկմանը։

ՎԵՐԱՓՈԽՈՒՄ՝ ՆԵՐՍԻՑ ՈՒ ԴՐՍԻՑ

Հայաստանի թատերական ընկերությունը օրերս սկսեց Ստեփանակերտի Մ. Գորկու անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի բեմական կառուցվածքի տեխնիկական վերափոխման աշխատանքները։ Այդ նպատակների համար ընկերությունը հատկացրել է 175 հազար ռուբլի, ժամանակակից բեմական սարքավորումներ, ռեկվիզիտներ։

Այս աշխատանքներին համատեղ քաղաքի շինարարների ուժերով մարմարապատվում են թատրոնի ճակատային մասն ու կամարապատերը։ Վերակառուցվում և բարեկարգվում է շենքի շրջակայքը։ Թատրոնի շենքը մտցվել է մարզի ճարտարապետական հուշարձանների կազմի մեջ։

ԳՐԱԿԱՆ ՈՒՐԲԱԹ

Տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի գրողների ինքնուրույն կազմակերպության անդրանիկ «Գրական ուրբաթը»։ Կազմակերպության նախագահ, բանասիրական գիտությունների թեկնածու, բանաստեղծ Վարդան Հակոբյանը հանգամանորեն պատմեց մարզի նոր կազմակերպության դերի և նշանակության, մարզի գրողների խնդիրների մասին։

ՍՍՀՄ պետհրատկոմիտեն որոշում է ընդունել Լեռնային Ղարաբաղում ստեղծել ինքնուրույն հրատարակչություն, գրական-գեղարվեստական, քաղաքական-հասարակական հանդես։ Դրանք հնարավորություն կտան մեծ աշխուժություն մտցնել մարզի գրական կյանքում։

«Գրական ուրբաթը» քննարկեց նաև երիտասարդ բանաստեղծներ Դավիթ Միքայելյանի, Ռոբերտ Եսայանի, Սեյրան Բալայանի և ուրիշների՝ վերջին ամիսներին գրած ստեղծագործությունները։ Երիտասարդ ստեղծագործողների աշխատանքների մասին իրենց խոսքն ասացին Հրաչյա Բեգլարյանը, Արմեն Հովհաննիսյանը, Սոկրատ Խանյանը և ուրիշներ։

Լ. ՄԿՐՏՉՅԱՆ
(Մեր սեփ. թղթ.)